ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3737-Ա « 30 » սեպտեմբերի 2024 թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
30.09.2024թ.
հ. 3737-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Լուսինե Հայրապետյան /լիազորված անձ/ Լյուդվիգ Հայրապետյան /սեփականատեր/	Գ. Արծրունի /Ծուլուկիձե/ փողոց, հ.72	բնակելի տուն	Լյուդվիգ Հայրապետյանին պատկանող, Գ. Արծրունու /Ծուլուկիձե/ փողոցի հ.72 հասցեում գտնվող բնակելի տանը /սեփ. վկ. հ.1647/ տրամադրել հասցե՝ Գ. Արծրունի փողոց, հ.72/1	01033UYNNVGV	
2	Տիգրան Թովմասյան /լիազորված անձ/ Արտավազդ Թովմասյան	Շիրակի փողոց, 4-րդ նրբանցք, հ.10/1	հողամաս	Անշարժ գույքի առանձնացված մասի առուվաճառքի 31.05.2024թ. հ.4241 պայմանագրով, Արտավազդ Թովմասյանի կողմից ձեռք բերված Շիրակի փողոցի 4-րդ նրբանցքի հ.10/1 հասցեում գտնվող 62.9քմ մակերեսով հողամասին /հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 12.06.2024թ. հ.Կ-12062024-01-0151 որոշում, պարիսպ՝ 0.878քմ/ տրամադրել հասցե՝ Շիրակի փողոց, 4-րդ նրբանցք, հ.11/6	01011AGRHPCT	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**